ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒԴՈՒՅՑԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

UNESCO

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐՋԱՆԱԿ ՄՇԱԿՈՂ-ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ ՄՇԱԿՈՂ-ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ուղեցույցը մշակվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ՝ նոր օրենսդրության ներքո» ծրագրի շրջանակում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի (United Nations Educational, Scientific and Cultural Organization) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Ուղեցույցի կազմողներ՝ Արամ Ավագյան
Լիլիթ Բեգլարյան



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....5

ՆԱԽԱԲԱՆ.....6

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9

1.1. Իրավական կարգավորումները և սահմանումները.....9

1.2. ՈՈՇ-ի էությունը և անհրաժեշտությունը.....13

ԳԼՈՒԽ 2. ՈՈՇ-Ի ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....16

2.1. Հիմնական սկզբունքները.....16

2.2. ՈՈՇ-ի կառուցվածքը և մշակման քայլերը.....16

2.3. Ոլորտի սահմանումը և դրա ընդհանուր ընդգրկումը.....18

2.4. Զբաղմունքները, խնդիրների բնագավառները և պարտականությունները.....23

2.5. ԳԿՀ-ները և որակավորումները.....26

2.6. ՈՈՇ-ի ձևաչափի լրացումը.....30

2.7. ՈՈՇ-ի փորձարկումը, գնահատումը և վերանայումը.....33

ԳԼՈՒԽ 3. ՈՇՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....35

3.1. ՈՇՆ կառուցվածքը.....35

3.2. ՈՇՆ ձևաչափի լրացումը.....37

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ 45

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ 49

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՀԿ	Գիտելիք, հմտություններ և կարողունակություններ
ԶՊԿԴ	Զբաղմունքների, պաշտոնների և կոմպետենցիաների դասակարգիչ
ԿԳՄՍ(Ն)	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (նախարարություն)
ԿՄ	Կրթության մասին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈՇՆ	Որակավորումների շրջանակային նկարագիր
ՈՈԾ	Որակավորումների ոլորտային շրջանակ
ՏԳՏԴ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ
CEDEFOP	Մասնագիտական կրթության զարգացման եվրոպական կենտրոն

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2010 թվականին Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) «Կրթության մասին» (այսուհետև՝ ԿՄ) օրենքում կատարվեց լրացում ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետև՝ ՈԱՇ), ներդրման վերաբերյալ, համաձայն որի 2011 թվականին ընդունվեց կրթական ութ աստիճան սահմանող ՀՀ **Որակավորումների ազգային շրջանակը**[1], որտեղ միջնակարգ կրթությամբ *արհեստավորի* որակավորումը զբաղեցնում է 4-րդ, իսկ *մասնագետի* որակավորումը՝ 5-րդ մակարդակը[2]:

2024 թվականին ԿՄ օրենքում կատարվեց նոր լրացում՝ ՀՀ **Որակավորումների ոլորտային շրջանակի** (այսուհետև՝ ՈՈՇ) ներդրման վերաբերյալ, և միաժամանակ ընդունվեց ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» (այսուհետև՝ ՄԿՈՒ) օրենքը, որը մասնավորապես սահմանեց **Մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակի** ներդրման պահանջը: Համաձայն ՄԿՈՒ օրենքի՝ պետք է սահմանվի նաև ՈՈՇ-ի յուրաքանչյուր **որակավորման շրջանակային նկարագիրը** (այսուհետև՝ ՈՇՆ):

2025 թվականին Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրերի (UNDP) աջակցությամբ մեկնարկեցին Հայաստանում ՈՈՇ-ների մշակման և ներդրման աշխատանքները: Մասնավորապես՝ ուսումնասիրվեց համապատասխան միջազգային փորձը, մշակվեց մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակների և դրանց բաղադրիչների ձևավորման մեթոդաբանությունը, որը հիմք ծառայեց ՄԿՈՒ որակավորումների ոլորտային շրջանակի և որակավորումների ոլորտային շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման

---

[1] Հաստատված է ՀՀ կառավարության 31.03.2011թ. N 332-Ն որոշմամբ և վերանայված է ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 714-Ն որոշմամբ:

[2] ՈԱՇ-ի 3-րդ մակարդակը զբաղեցնում է հիմնական կրթությամբ Արհեստավորի որակավորում, որը կարող է շնորհվել վարպետային ուսուցման արդյունքում, սակայն այդ կրթական ծրագիրը գործնականում չի իրականացվում, իսկ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակը կորցրել է իր արդիականությունը:

շրջանակային նկարագրի ձևաչափերն ու դրանց մշակման ուղեցույցները: Մինչ այդ, սակայն, ՈՈՇ-ի և ՈՇՆ-ի ձևաչափերն ու մշակման մեթոդաբանությունները Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, քննարկվեցին ու համաձայնեցվեցին շահակիցների լայն շրջանակի հետ, որին հաջորդեցին նաև այդ փաստաթղթերի նախագծերի փորձարկումները կրթության և զբաղվածության ոլորտների, ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խմբերի միջոցով:

ՈՈՇ-ը ազգային որակավորումների համակարգի առանցքային գործիք է, որը միավորում է կրթությունը, աշխատաշուկան և ոլորտային կարգավորումները՝ ապահովելով որակավորումների թափանցիկություն, համադրելիություն և շարժունություն: ՈՈՇ-ների ներդրման անհրաժեշտությունը հիմնավորվում է ՄԿՈՒ համակարգը բարեփոխելու, ինչպես նաև Հայաստանի ՄԿՈՒ որակավորումները միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու, դրանց ճանաչելիությունն ու շարժունությունն ապահովելու տեսանկյունից:

Որպես արդյունք՝ ներկայումս գործող մասնագիտությունների խմբերից, մասնագիտություններից և որակավորումներից անցում է կատարվելու ՈՈՇ-ների համակարգի, այն է՝ անցում «ինչ սովորել» մոտեցումից «ինչ կարողանալ կիրառել աշխատավայրում» մոտեցման: Ըստ այդմ՝ ՈՈՇ-ի մշակման գործընթացը պետք է հիմնված լինի աշխատաշուկայի տվյալների, ոլորտային ուսումնասիրությունների, վիճակագրության և կանխատեսումների վրա՝ ապահովելով որակավորումների մշտական համապատասխանեցում տնտեսության պահանջներին և ոլորտի փոփոխվող կարիքներին:

Օրենքների հղումներից տեսանելի է դառնում գլխավոր խնդիրը, այն է՝ տնտեսության որոշակի ոլորտի համար սահմանել որակավորումների այնպիսի նկարագրեր, որոնք կարտահայտեն գիտելիքի, հմտությունների և կարողունակությունների նկատմամբ

որոշակի պահանջներ բավարարող վերջնարդյունքներ՝ ապահովելով նաև ՈԱԾ-ների և ՈՈԾ-ների համադրելիությունն ու կապը:

Սույն ուղեցույցը նպատակ ունի օժանդակել մասնագիտական կրթության և ուսուցման՝ «արհեստավոր» կամ «կրտսեր մասնագետ» և «մասնագետ» որակավորումների ոլորտային շրջանակները, ինչպես նաև յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը մշակելու և ներդնելու աշխատանքներում համակարգված մոտեցմանը: Այն նախատեսված է ՄԿՈՒ համակարգի պետական մարմինների, ուսումնական հաստատությունների, գործատուների, մասնագիտական միավորումների ու փորձագետների համար: Ուղեցույցը մշակելիս հաշվի է առնվել միջազգային առաջավոր փորձը, հայաստանյան իրողությունները, այդ թվում՝ ՄԿՈՒ ոլորտում կուտակված ազգային փորձառությունը: Ուղեցույցը սահմանում է ՈՈԾ-ների մշակման հիմնական սկզբունքները, գործընթացի փուլերը, պատասխանատուների դերերը և որակավորման մակարդակների նկարագրության ընդհանուր մեթոդաբանությունը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Իրավական կարգավորումները և սահմանումները

ՈՈՇ-ի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ ԿՄ և ՄԿՈՒ օրենքների պահանջներով: Մասնավորապես՝ ԿՄ օրենքը սահմանում է, որ *կրթության պետական կառավարման լիազորված մարմինը* (ներկայումս՝ ԿԳՄՍ նախարարությունը) *կազմում և հաստատում է ոլորտային որակավորումների շրջանակը, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը*[3], իսկ ՄԿՈՒ օրենքը նույն մարմնին վերապահում է *ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը հաստատելու* իրավասությունը[4]: Միաժամանակ, ՄԿՈՒ օրենքը սահմանում է, որ կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի այլ լիազոր մարմինները, այն է՝ ճյուղային նախարարություններն ու այլ համապատասխան գերատեսչությունները մասնագիտական կրթության մասով *ձևավորում են ոլորտային որակավորումների շրջանակի, որակավորումների ցանկերի և բնութագրերի, որակավորման շրջանակային նկարագրի, ուսանողների գիտելիքների, կարողունակությունների նկատմամբ պահանջները*[5]:

ՈԱՇ-ի և ՈՈՇ-ների կարևորությունը և դրանց գործնական նշանակությունն ընդգծվում է ՄԿՈՒ օրենքի մեկ այլ պահանջով, համաձայն որի, *մասնագիտական կրթական ծրագրերը կազմվում են որակավորումների ազգային շրջանակի և ոլորտային որակավորումների շրջանակի պահանջներին համապատասխան*[6]:

Բացի այդ, ՄԿՈՒ օրենքը սահմանում է, որ ՄԿՈՒ բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից է *աշխատաշուկայի*

---

[3] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 37, կետ 6.1:

[4] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 19, մաս 1, կետ 1:

[5] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 20, մաս 1, կետ 2:

[6] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 7, մաս 1:

ներկայի և ապագայի կարիքներին միտված որակավորումների ոլորտային շրջանակ սահմանելը՝ առաջնորդվելով պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքով[7]:

Նշված իրավական դրույթները և ընդհանուր առմամբ՝ ՈՈՇ-ի էությունն առավել լավ ընկալելու համար, նախ և առաջ, անդրադառնանք մի շարք կարևոր հասկացությունների սահմանումներին: Ամենահիմնարար հասկացություններից է *որակավորումը*, որը ԿՄ օրենքով սահմանվում է հետևյալ կերպ.

> **Որակավորում**՝ պետական ամփոփիչ ստուգման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով[8]:

Միաժամանակ, ՄԿՈՒ օրենքը տալիս է *մասնագիտական կրթության որակավորում* հասկացության սահմանումը.

> **Մասնագիտական կրթության որակավորում**՝ անձին շնորհվող արհեստավորի (կամ կրտսեր մասնագետի) կամ մասնագետի կրթական աստիճան, որը հավաստում է ՄԿՈՒ համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառության ավարտը և հաստատվում համապատասխան ավարտական փաստաթղթով[9]:

Որակավորման մասին առավել լայն պատկերացում կազմելու համար տեղին է անդրադարձ կատարել նաև այդ հասկացության միջազգայնորեն ընդունված սահմանմանը, որը կարելի գտնել, օրինակ՝ Մասնագիտական կրթության զարգացման եվրոպական կենտրոնի (այսուհետև՝ CEDEFOP[10]) 2024 թվականին հրատարակած բառացանկում.

---

[7] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 5, մաս 1, կետ 4:

[8] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 17.1:

[9] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 17:

[10] European Centre for the Development of Vocational Training: https://www.cedefop.europa.eu/en:

Որակավորում՝ գնահատման գործընթացի ֆորմալ արդյունք (վկայական, դիպլոմ կամ կոչում/աստիճան), որը ձեռք է բերվում, երբ իրավասու մարմինը որոշում է, որ անձի կողմից նվաճած ուսումնառության արդյունքները համապատասխանում են սահմանված չափորոշիչներին և/կամ նա տիրապետում է որոշակի ոլորտում աշխատանք կատարելու համար անհրաժեշտ կարողունակությունների[11]:

Հասկացությունների հաջորդ խումբը վերաբերում է որակավորումների շրջանակներին: Նախ և առաջ, ներկայացնենք *Որակավորումների ազգային շրջանակի*՝ ԿՄ օրենքում բերված սահմանումը, քանի որ ՈՈՇ-ը հիմնվում է հենց ՈԱՇ-ի վրա.

Որակավորումների ազգային շրջանակ՝ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների բնութագրերի ամբողջությունը, որը ներառում է ուսումնառության յուրաքանչյուր աստիճանում ուսուցման արդյունքների և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտություն-ների ու կարողությունների ընդհանրական նկարագրերը[12]:

Անդրադառնալով բուն ՈՈՇ-ին՝ նշենք, որ դրա սահմանումը տրված է ԿՄ օրենքում.

Որակավորումների ոլորտային շրջանակ՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որոշակի ոլորտում կրթական մակարդակի որակավորումների խումբ (ցանկ, ամբողջություն) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքներն ապահովելու պահանջներ (բնութագիր)[13],

իսկ ՄԿՈՒ օրենքը սահմանում է *Մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակը*.

---

[11] https://www.cedefop.europa.eu/files/4064_en.pdf:

[12] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 17.2:

[13] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 17.3:

Մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակ՝ որակավորումների ոլորտային շրջանակի բաղկացուցիչ մաս, որով սահմանվում են մասնագիտական կրթության մակարդակի որակավորումների խումբը (ցանկը) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքներն ապահովելու պահանջները (բնութագիրը)[14]:

ՀՀ օրենսդրությունում կարելի է գտնել միայն ուսումնառության վերջնարդյունք արտահայտության սահմանումը, որոնք գրեթե նույնական են թե՛ ԿՄ, թե՛ ՄԿՈՒ օրենքներում.

Ուսումնառության վերջնարդյունք՝ դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին պահանջվող գիտելիքի և կարողունակությունների ամբողջություն[15]:

Գիտելիքի, հմտության և կարողունակության (այսուհետև՝ ԳՀԿ) սահմանումները ՀՀ որևէ իրավական ակտում ձևակերպված չեն, սակայն դրանք կարելի գտնել CEDEFOP-ի բառացանկում: Ստորև բերված է նաև կարողունակության միջազգային սահմանումը, ինչպես նաև վերջինում օգտագործված մեկ այլ՝ նոու-հաու եզրույթը.

Գիտելիք՝ ուսումնառության միջոցով տեղեկությունների յուրացման արդյունք: Գիտելիքն ուսումնառության կամ աշխատանքի ոլորտին առնչվող փաստերի, սկզբունքների, տեսությունների և գործնական կիրառությունների ամբողջությունն է:

Հմտություն՝ առաջադրանքների կատարման և խնդիրների լուծման համար գիտելիք կիրառելու և օգտագործելու ունակություն:

Կարողունակություն՝ գիտելիքը, նոու-հաուն, փորձառությունը և աշխատանքին առնչվող, սոցիալական կամ մեթոդաբանական հմտությունները և անձնական, սոցիալական և/կամ

[14] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5:

[15] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք, հոդված 3, մաս 1, կետ 9 և ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 3, կետ 1.19:

մեթոդաբանական հմտություններն աշխատանքային կամ ուսումնառության իրավիճակներում, ինչպես նաև մասնագիտական և անձնային զարգացման գործում կիրառելու ունակություն:

Նոու-հաու՝ անձի կամ խմբի՝ որևէ արտադրանքի, ծառայության կամ գործընթացի վերաբերյալ գործնական գիտելիք:

1.2. ՈՈՇ-ի էությունը և անհրաժեշտությունը

Հաշվի առնելով վերը ներկայացված իրավական կարգավորումներն ու սահմանումները՝ կարելի է եզրակացնել, որ թե՛ ԿՄ, թե՛ ՄԿՈՒ օրենքն ըստ էության սահմանում են ՈՈՇ-ը որպես տնտեսության որոշակի ոլորտին վերաբերող՝ մասնագիտական կրթության *որակավորումների ցանկ* (ամբողջություն) և այդ *որակավորումների ընդհանուր բնութագրեր*՝ արտահայտված ուսումնառության վերջնարդյունքներով, այն է՝ պահանջվող գիտելիքով, հմտություններով և կարողունակություններով: Պահանջվում է նաև, որ ՈՈՇ-ը համապատասխանի որակավորումների ազգային շրջանակին:

Այսպիսով՝ այս մեթոդաբանության իմաստով ՈՈՇ-ը կհասկացվի որպես ***տնտեսության որևէ ոլորտի շրջանակներում իրականացվող մասնագիտական գործունեության տարատեսակների, այն է՝ զբաղմունքների համար անհրաժեշտ՝ մասնագիտական կրթության որակավորումների ցանկ և դրանց ընդհանուր բնութագրիչները*** *(կամ շրջանակային նկարագիր, ինչպես դա ձևակերպված է մասնավորապես ՄԿՈՒ օրենքում)՝* ***արտահայտված պահանջվող գիտելիքով, հմտություններով և կարողունակություններով****:*

Միջազգային սահմանման համաձայն ՈՈՇ-ը նաև որակավորումների մշակման, դասակարգման և շնորհման գործիք է:

Այս մոտեցման շրջանակներում աշխատանքը և/կամ ***զբաղմունքը*** հանդես է գալիս որպես հիմնարար կատեգորիա, որը և պետք է «թելադրի» որակավորումների ցանկերի ձևավորումը: Ընդ որում, պարտադիր չէ, որ այս կամ այն ՈՈՇ-ում ներառված որևէ

որակավորում միանշանակ համապատասխանի միայն մեկ կոնկրետ զբաղմունքի: Այսպես՝ որոշակի որակավորում կարող է անձին հնարավորություն ընձեռել (իրավունք տալ) հավակնել տարբեր (հարակից) զբաղմունքների, օրինակ՝ *ավտոմատացված համակարգերի մասնագետի* որակավորում ունեցողը կարող է զբաղեցնել համապատասխան սարքերի՝ թե՛ տեղակայողի, թե կարգաբերողի կամ նորոգողի, թե՛ դրանց շահագործողի պաշտոններից որևէ մեկը: Միաժամանակ, որևէ զբաղմունքի իրականացումը կարող է արտոնվել տարբեր որակավորումներ ունեցող անձանց, օրինակ՝ ձեռնարկության ղեկավարի պաշտոնը կարող է զբաղեցնել բավարար բարձր մակարդակի՝ թե՛ կառավարչական, թե՛ ճարտարագիտական և թե՛ տնտեսագիտական որակավորում ունեցող անձը: Այս խնդիրը կարգավորվում է ոչ միայն ՈՈՇ-ի սահմանումներով, այլև՝ *պաշտոնների բնութագրերով*:

Որակավորումների շրջանակների կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրանք, սահմանելով հստակ չափորոշիչներ, բարձրացնում են թափանցիկության աստիճանը բոլոր շահագրգիռ կողմերի համար. գործատուները կարող են գտնել համապատասխան թեկնածուներ, ուսումնական հաստատությունները՝ մշակել համապատասխան ուսումնական ծրագրեր, իսկ ուսանողները՝ հստակ կողմնորոշվել կարիերայի հնարավոր ուղիներում: Այդ շրջանակները ծառայում են որպես որակի ապահովման, կրթական ծրագրերի մշակման, նախընթաց ուսումնառության արդյունքների ճանաչման և որակավորման բարձրացման նպատակային գործողությունների հիմք:

Աշխատաշուկայի և կրթության միջև կապի ապահովման տեսանկյունից ՈՈՇ-ի՝ որպես իրավական շրջանակի, դերը կարելի է ներկայացնել հաջորդ էջում բերված գծապատկերով:

Ինչպես արդեն նշվել է, ներկայումս գործող ՈԱՇ-ով արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունն աստիճանակարգված են համապատասխանաբար՝ 4-րդ և 5-րդ մակարդակներում: Սակայն բարեփոխված օրենսդրությամբ՝ դրանք վերաբերում են համապատասխանաբար՝ առաջին («արհեստավոր»

կամ «կրտսեր մասնագետ») և երկրորդ («մասնագետ») մակարդակներին: Հետևաբար, ՈՈՇ-ի՝ սույն ուղեցույցում քննարկվող ձևաչափում ՄԿՈՒ որակավորումները բերված են ըստ ՄԿՈՒ օրենքի:



ԳԼՈՒԽ 2. ՈՈՇ-Ի ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Հիմնական սկզբունքները

Մասնագիտական կրթության ՈՈՇ-ները մշակվում են պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքի կիրառմամբ՝ տվյալ ոլորտի սոցիալական գործընկերների ընդգրկմամբ: Այդպիսիք են, օրինակ՝ ՄՈՒՀ-երի, գործատուների, դրանց միավորումների և ոչ առևտրային այլ կազմակերպությունների, արհեստակցական միությունների, հանրային իշխանության մարմինների, այդ թվում՝ ոլորտային գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական քաղաքականության նպատակներից բխող պատվիրակված գործառույթներ իրականացնող կառույցների մասնագետ ներկայացուցիչները, կրթության և տվյալ ոլորտում փորձառություն ունեցող մասնագետները:

ՈՈՇ-ի մշակման ընթացքում անհրաժեշտ է ապահովել այնպիսի բնութագրիչներ, որոնք յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն կընձեռեն իրականացնել որակավորված մասնագիտական գործունեություն, կատարել զբաղմունքին հատուկ գործառույթներ, դիմագրավել ներկայի և ապագայի մարտահրավերներին, արձագանքել և հարմարվել աշխատաշուկայի փոփոխվող պայմաններին, կատարելագործվել և կառուցել կարիերայի սեփական ուղին:

2.2. ՈՈՇ-ի կառուցվածքը և մշակման քայլերը

ՈՈՇ-ը ունի հետևյալ կառուցվածքը՝

1. **Ոլորտի անվանումը** (սահմանումը), ոլորտի դասիչը, ընդհանուր շրջանակը (ընդգրկումը).
2. Տվյալ ոլորտի **ենթոլորտները**.
3. **Որակավորումները՝** ըստ մակարդակների, և դրանց դասիչները.

4. Յուրաքանչյուր որակավորմանը համապատասխանող հնարավոր **զբաղմունքները**.
5. Յուրաքանչյուր որակավորման համար անհրաժեշտ **գիտելիքի**, **հմտությունների և կարողունակությունների** (այսուհետև՝ ԳՀԿ) **լրակազմը**՝ որպես ուսումնառության վերջնարդյունքներ:

ՈՈՇ-ի կառուցվածքը ներկայացված է *Ձևաչափ 1-ում*:

Յուրաքանչյուր ՈՈՇ-ի մշակման համար անհրաժեշտ կլինի կատարել հետևյալ հաջորդական քայլերը, որոնց հերթականությունը, սակայն, տարբերվում է ՈՈՇ-ի՝ վերը բերված կառուցվածքային միավորների հերթականությունից՝

1) սահմանել այն **ոլորտի շրջանակը** (ընդգրկումը), որի համար մշակվում է ՈՈՇ-ը.
2) անհրաժեշտության դեպքում սահմանել տվյալ ոլորտի **ենթոլորտները**.
3) սահմանել ոլորտում ընդգրկվող **զբաղմունքների ցանկը**.
4) յուրաքանչյուր զբաղմունքի համար որոշարկել **խնդիրների բնագավառները** (ոչ պարտադիր), ապա՝ **աշխատանքային գործառույթները (կամ պարտականությունները)**.
5) սահմանել յուրաքանչյուր աշխատանքային գործառույթ կատարելու համար անհրաժեշտ **գիտելիքը**, **հմտությունները** և **կարողունակությունները**.
6) սահմանված ԳԿՀ-ները խմբավորել (բաշխել) ըստ **ՈՈՇ-ի մակարդակների**՝ ՈԱՇ-ի մակարդակներին համապատասխան.
7) վերոնշյալ բաշխման հիման վրա սահմանել ՈՈՇ-ի յուրաքանչյուր մակարդակի **որակավորումները** և դրանց համապատասխանող ԳԿՀ-ների լրակազմը:

Ստորև ներկայացվում է վերը նշված քայլերի իրականացման մանրամասն ուղեցույց:

Ձևաչափ 1

_____ (_____) ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

ոլորտի անվանումը ոլորտի դասիչը

Ոլորտի շրջանակը՝ _____

Ենթոլորտները՝ 1. _____
2. _____
3. _____

Որակավորումը		Հնարավոր զբաղմունքները	Գիտելիքը	Հմտությունները	Կարողունակու-թյունները
Դասիչը	անվանումը				
Մակարդակ 1. Արհեստագործական կրթություն					
xx-4-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
xx-4-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
xx-4-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
Մակարդակ 1. Արհեստագործական կրթության՝ միկրոորակավորում(ներ)					
xx-4-xx*z		• …	• …	• …	• …
xx-4-xx*z		• …	• …	• …	• …
Մակարդակ 2. Միջին մասնագիտական կրթություն					
xx-5-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
xx-5-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
xx-5-xx	…	• … • … • …	• … • … • …	• … • … • …	• … • … • …
Մակարդակ 2. Մասնագիտական կրթության միկրոորակավորում(ներ)					
xx-5-xx*z		• …	• …	• …	• …
xx-5-xx*z		• …	• …	• …	• …

2.3. Ոլորտի սահմանումը և դրա ընդհանուր ընդգրկումը

Ոլորտը որոշարկելու, սահմանելու և դրա շրջանակը (ընդգրկումը) որոշելու համար նպատակահարմար է առաջնորդվել համապատասխան պետական կառավարման լիազորված մարմնի (մարմինների) իրավական ակտերով: Որպես օրինակ կարող է դիտարկվել ներկայումս գործող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 10.12.2019թ. № 1579-Ն հրամանով հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (այսուհետև՝ ՏԳՏԴ), որը սահմանում է տնտեսության ***21 հիմնարար ճյուղ***՝ համարակալված A-ից U լատինական տառերով (դասակարգչի առաջին աստիճան), օրինակ՝ A - Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, B - Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում, C - Մշակող արդյունաբերություն, և այլն: Յուրաքանչյուր ճյուղ բաժանվում է հատվածների (երկնիշ դասիչ), խմբերի (եռանիշ դասիչ), դասերի (քառանիշ դասիչ) և ենթադասերի (հնգանիշ դասիչ), օրինակ՝

Ա. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն

01. Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ

01.1. Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում

01.11. Հացահատիկային մշակաբույսերի (բացի բրնձից), հատիկաընդեղենային և յուղատու մշակաբույսերի աճեցում

01.11.1. Հացահատիկային մշակաբույսերի (բացի բրնձից) աճեցում

01.11.2. Հատիկաընդեղենային մշակաբույսերի աճեցում

և այլն.

01.2 Բազմամյա մշակաբույսերի աճեցում

01.21 Խաղողի աճեցում

01.24 Կորիզավոր և հնդավոր պտուղների աճեցում

01.24.1 Կորիզավոր պտուղների աճեցում

01.24.2 Հնդավոր պտուղների աճեցում

և այլն.

02. Անտառային տնտեսություն և փայտամթերումներ
  02.1. Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն
    02.10. Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն
  02.2. Փայտամթերումներ
    02.20. Փայտամթերումներ
      02.20.1. Անտառմշակող արդյունաբերության համար կլոր անտառանյութի արտադրություն
      02.20.2. Ամրակման փայտանյութի, սյուների, փայտածողերի և այլնի արտադրություն

և այլն:

Այսպիսով՝ ՏԳՏԴ-ն ապահովում է ճյուղերի մանրամասն նկարագրություն, որը կարող է հիմք ծառայել յուրաքանչյուր ՈՈՇ-ի համապատասխան ոլորտի շրջանակի սահմանման համար: Ընդ որում, պարտադիր չէ (անգամ ցանկալի չէ), որ ՈՈՇ-ը վերաբերի որևէ ամբողջական հիմնարար ճյուղի, որի ընդգրկումը կարող է չափազանց մեծ լինել: Առավել նպատակահարմար է, որ ՈՈՇ-ները վերաբերեն հատվածների կամ առավելագույնը՝ մի քանի հատվածի խմբի: Օրինակ՝ *A - Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն* ճյուղից կարող են առանձնացվել հետևյալ **ոլորտները**՝

- (01) Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ.
- (02) Անտառային տնտեսություն և փայտամթերումներ.
- (03) Ձկնորսություն և ձկնաբուծություն,

C - Մշակող արդյունաբերություն ճյուղից՝

- (10) Սննդամթերքի արտադրություն և (11) խմիչքների արտադրություն.
- (13) Մանածագործական արտադրատեսակների արտադրություն.

- (14) Հագուստի արտադրություն և (15) կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն,

իսկ, օրինակ՝ *D - Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում* ճյուղից՝

- (35.1) Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում,
- (35.2) Գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով,
- (35.3) Գոլորշու և լավորակ օդի մատակարարում

ոլորտները: Ընդ որում, եթե A և C ճյուղերից որպես ոլորտ առաջարկվում է մեկ կամ երկու հատված, ապա D ճյուղի դեպքում որպես ոլորտ առաջարկվում է մեկական խումբ, քանի որ այդ ճյուղը բաղկացած է ընդամենը մեկ՝ չափազանց լայն ընդգրկում ունեցող հատվածից՝ *35. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում* (նույնական է ճյուղին): Հետևաբար, վերոնշյալ փաստաթղթով առաջնորդվելու դեպքում, ոլորտների թիվը, որոնց համար կմշակվեն ՈՈՇ-ներ, կգերազանցի 21-ը: Ոլորտների ընտրությունը կատարվում է համապատասխան կազմակերպությունների (արտադրությունների, ծառայություն մատուցողների և այլն) ներկայացուցիչների կողմից:

Ոլորտի շրջանակը սահմանելիս աշխատանքային խումբը կարող է օգտվել ՏԳՏԴ պարզաբանումներից[16]: Օրինակ՝ 35.1 **ոլորտի շրջանակը** կարող է սահմանվել հետևյալ կերպ. «*Տարբեր աղբյուրներից և միջոցներով ստացված՝ ջերմային, միջուկային, գազատուրբինային, հիդրոէլեկտրական և այլ (բացառությամբ թափոնների այրման միջոցով ստացված) էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման համակարգերի և բաշխիչ ցանցերի (մալուխների, սյուների, հաշվիչների, էլեկտրալարերի համակարգ) կառավարում, որի արդյունքում էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպություններից այն հաղորդվում և բաշխվում է*

[16] Օրինակ՝ ներկայումս գործող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 10.12.2019թ. № 1579-Ն հրամանով հաստատված դասակարգչի մաս 2:

վերջնական սպառողների միջև (վաճառվում նրանց)»:

Եթե ՈՈՇ-ի ոլորտ է ընտրվել ՏԳՏԴ որևէ հատված (կամ 2 հատված), ապա ենթոլորտները կարող են սահմանվել խմբերի համաձայն, օրինակ՝ *01.1. Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում*, *01.2. Բազմամյա մշակաբույսերի աճեցում* և այլն, «(01) Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ» ոլորտի դեպքում, կամ *10.1. Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն*, *10.2. Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում* և այլն, «(10) Սննդամթերքի արտադրություն և (11) խմիչքների արտադրություն» ոլորտի դեպքում:

Եթե ՈՈՇ-ի ոլորտ է ընտրվել ՏԳՏԴ որևէ խումբ, ապա որպես ենթոլորտ կարող են հադես գալ ՏԳՏԴ դասերը, օրինակ՝ *35.11 Էլեկտրաէներգիայի արտադրություն*, *35.12 Էլեկտրաէներգիայի հաղորդում* և այլն:

Այսպիսով, վերը բերված ձևաչափ 1-ում **ՈՈՇ-ի ենթոլորտները** կնշվեն, օրինակ՝ հետևյալ կերպ.

10.1. Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն,
10.2. Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում,
10.3. Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում,
10.4. Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն,
10.5. Կաթնամթերքի արտադրություն,
և այլն

կամ

35.11. Էլեկտրաէներգիայի արտադրություն,
35.12. Էլեկտրաէներգիայի հաղորդում,
35.13. Էլեկտրաէներգիայի բաշխում,
35.14. Էլեկտրաէներգիայի վաճառք:

2.4. Զբաղմունքները, խնդիրների բնագավառները և պարտականությունները

Զբաղմունքները որոշարկվում են պետական կառավարման համապատասխան լիազոր մարմնի (մարմինների) նորմատիվ իրավական ակտով: Որպես օրինակ կարող է դիտարկվել ներկայումս գործող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. № 873-Ն հրամանով հաստատված ՀՀ զբաղմունքների դասակարգչով կամ ընթացիկ փուլում նախագծի վիճակում գտնվող՝ զբաղմունքների, պաշտոնների և կարողունակությունների դասակարգչով (այսուհետև՝ ԶՊԿԴ) սահմանված զբաղմունքների (որոշ դեպքերում՝ դրանց փոքր և ստորին խմբերի) ցանկերը: Ստորև, որպես օրինակ, բերվում է «(35.1) Էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդում և բաշխում» ոլորտին վերաբերող զբաղմունքների մոտավոր ցանկ.

1210 - Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների.

1222 - Ղեկավարներ՝ վերամշակող արդյունաբերության արտադրական և շահագործական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների (օրինակ՝ Գլխավոր էլեկտրագետ, Գլխավոր էներգագետ).

2143 - Ճարտարագետ-էլեկտրագետ, ճարտարագետ-էներգագետ.

3113 - Տեխնիկ-էլեկտրագետ.

7241 - Մեքենագետներ և տեղակայող՝ էլեկտրական սարքերի.

7245 - Տեղակայող և նորոգող՝ էլեկտրահաղորդագծերի, մալուխագործ-զոդող.

8161 - Օպերատորներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի.

9153 - Հսկիչ՝ էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչի.

և այլն:

Զբաղմունքների ցանկում կարող են ընդգրկվել նաև տվյալ ոլորտի մասնագիտական գործունեությանը (տվյալ դեպքում՝ էլեկտրաէներգիայի արտադրությանը, հաղորդմանը և բաշխմանը) անմիջականորեն չառնչվող զբաղմունքներ, որոնք սակայն

անհրաժեշտ են տվյալ ոլորտի համապատասխան կազմակերպությունների բնականոն գործունեությունն ապահովելու համար: Դրանք են, օրինակ՝ 4121 - Ծառայողներ՝ հաշվապահական գործառնությունների և հաշվառման, 4122 - Ծառայողներ՝ վիճակագրական և ֆինանսական տեղեկատվության մշակման (օրինակ՝ Ծառայող՝ ինքնարժեքի հաշվառման, Ծառայող՝ ֆինանսների հաշվառման) և այլն: ՈՈՇ-ում այս զբաղմունքների և համապատասխան որակավորումների ընդգրկման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ, օրինակ՝ հաշվապահները կամ ֆինանսական մասնագետները պետք է որոշակիորեն մասնագիտացված լինել տվյալ ոլորտում, տիրապետեն դրա առանձնահատկություններին, որը և կառաջացնի լրացուցիչ պահանջներ նրանց ԳԿՀ-ների նկատմամբ:

Հաջորդ քայլով յուրաքանչյուր զբաղմունքի համար որոշարկվում են **պարտականությունները** (կամ **աշխատանքային գործառույթները**): Սա զուտ մասնագիտական աշխատանք է և իրականացվում է ոլորտի գործունեության տարբեր բնագավառները ներկայացնող և տարբեր մակարդակի պաշտոններ զբաղեցնող փորձառու և գիտակ աշխատակիցների կողմից: Այս գործողությանը, սակայն, պետք է անմիջականորեն մասնակցեն նաև աշխատանքի ոլորտի մասնագետներ, օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտից և/կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Հնարավոր է նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչների մասնակցությունը:

Պարտականությունները (աշխատանքային գործառույթները) որոշարկելիս՝ անհրաժեշտ է հիմք ընդունել ՋՊԿԴ-ում բերված պարզաբանումները[17]: Օրինակ՝ «Տեխնիկ-էլեկտրագետ» զբաղմունքի համար սահմանված է, որ *նրանք լուծում են էլեկտրատեխնիկայի ոլորտի հետազոտություններին, ինչպես նաև էլեկտրական սարքավորումներ և բաշխիչ համակարգեր նախագծելուն,*

[17] Ներկայումս գործող ՀՀ զբաղմունքների դասակարգչի մաս 3. «Պարզաբանումներ՝ զբաղմունքների հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի»:

պատրաստելուն, հավաքելուն, կառուցելուն, շահագործելուն և նորոգելուն առնչվող տեխնիկական խնդիրներ, իսկ նրանց պարտականությունները ներառում են.

1) *էլեկտրական սարքերի ու սարքավորումների հետազոտմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը.*
2) *էլեկտրական սարքավորումների գծագրեր և ուրվագծեր մշակելն ու պատրաստելը՝ մասնագրերին համապատասխան.*
3) *սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի քանակը և արժեքը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.*
4) *էլեկտրական սարքավորումների և համակարգերի ճիշտ շահագործումը հսկելը, սարքավորումների անսարքությունների պատճառները բացահայտելը և դրանք վերացնելը.*
5) *էլեկտրասարքավորումներից և սարքերից օգտվող աշխատողներին դրանց շահագործման կանոնների մասին հրահանգավորելը.*
6) *էլեկտրական համակարգերի և սարքավորումների պատրաստման, տեղակայման, շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ աշխատանքների որակով կատարումն ապահովելու համար՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.*
7) *էլեկտրատեխնիկայի բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները, ինչպես նաև գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.*
8) *այլ աշխատողներին ղեկավարելը.*
9) *բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:*

ՈՈՇ-ի մշակման համատեքստում, սակայն, այս ցանկը կարող է որոշակիորեն ճշգրտվել: Որոշ դեպքերում, պարտականությունների

(աշխատանքային գործառույթների) որոշարկման համար կարող է առավել նպատակահարմար լինել նախ և առաջ՝ սահմանել տվյալ զբաղմունքի **խնդիրների բնագավառները**, որոնցից կբխեն աշխատանքային գործառույթները: Խնդիրների բնագավառը ներառում է հարակից (նմանատիպ) աշխատանքային գործառույթների լրակազմ՝ օրինակ՝ որոշակի արտադրական գործընթացի կամ դրա որևէ փուլի իրականացման և ամբողջացման համար: Այդ իսկ պատճառով խնդիրների բնագավառը պայմանավորված է աշխատանքային գործառույթների տեսակներով (տիպերով), դրանց նմանությամբ ու իրականացման ընդհանուր նպատակով, այլ ոչ բարդությամբ և հետևաբար՝ ոչ պահանջվող ԳԿՀ-ներով:

2.5. ԳԿՀ-ները և որակավորումները

Հաջորդ քայլով աշխատանքային գործառույթներից յուրաքանչյուրի համար որոշվում են պահանջվող ԳԿՀ-ները: Այսպիսով, ձևավորվում է հետևյալ պատկերում ներկայացված շղթան, որի արդյունքում սահմանվում է ԳԿՀ-ների որոշակի լրակազմ.



Սահմանված ԳԿՀ-ների լրակազմերը խմբավորվում և բաշխվում են՝ ըստ որակավորումների մակարդակների, ինչը հանգեցնում է

նաև համապատասխան պարտականության (աշխատանքային գործառույթների), ապա՝ զբաղմունքների դասակարգման՝ ըստ որակավորումների մակարդակների և կոնկրետ որակավորումների, ինչպես ներկայացված է ստորև *Ձևաչափ 2-ում*.

Ձևաչափ 2

Ոլորտի զբաղմունքների, խնդիրների բնագավառների, աշխատանքային գործառույթների և դրանց կատարման համար պահանջվող ԳԿՀ-ների որոշարկման գործիք («Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում» ոլորտի օրինակով)

Զբաղմունքները	Խնդիրների բնագավառները	Աշխատանքային գործառույթները	Գիտելիքը	Հմտությունները	Կարողունակությունները	ՈՈԾ-ի մակարդակը (1 կամ 2)
Տեխնիկ-էլեկտրագետ (3113)	Ապահովել էլեկտրական սարքերի ու սարքավորումների հետազոտմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն	1. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		2. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		3. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
	Մասնագրերին համապատասխան՝ մշակել և պատրաստել էլեկտրական սարքավորումների գծագրեր և ուրվագծեր	1. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		2. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		3. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
	Մասնագրերին համապատասխան՝ որոշել սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի քանակը և արժեքը	1. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		2. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		3. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
	Հսկել էլեկտրական սարքավորումների և համակարգերի ճիշտ շահագործումը, բացահայտել	1. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		2. …	• … • …	• … • …	• … • …	

Զբաղմունքները	Խնդիրների բնագավառները	Աշխատանքային գործառույթները	Գիտելիքը	Հմտությունները	Կարողունակությունները	ՈՈՇ-ի մակարդակը (1 կամ 2)
	սարքավորումների անսարքությունների պատճառները և վերացնել դրանք		• …	• …	• …	
		3. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
	Ղեկավարել այլ աշխատողների	1. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		2. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
		3. …	• … • … • …	• … • … • …	• … • … • …	
Մեքենագետ և տեղակայող՝ էլեկտրական սարքերի (7241)	Հավաքել, կարգաբերել և նորոգել տարբեր տեսակի էլեկտրամեխանիկական սարքավորումներ և շարժիչներ, գեներատորներ, բաշխիչ սարքեր, հսկիչ-չափիչ սարքեր, սարքերի կամ էլեկտրաբարձիչի էլեկտրամեխանիկական մասեր ու համանման սարքավորումներ	1. …	• … • … …	• … • … …	• … • … …	
		2. …	• … • … …	• … • … …	• … • … …	
		3. …	• … • … …	• … • … …	• … • … …	
	Աստիճանավորել էլեկտրաչափիչ սարքեր	1. …				
		2. …				
		3. …				
	Հավաքելը տարբեր բարդության էլեկտրական սխեմաներ	1. …				
		2. …				
		3. …				
	Կատարելը էլեկտրական սարքավորումների հավաքման ժամանակ անհրաժեշտ պարզ հաշվարկներ	1. …				
		2. …				
		3. …				
	Ղեկավարել այլ աշխատողների	1. …				
		2. …				
		3. …				
	…	1. …				
		2. …				
		3. …				
Տեղակայող և նորոգող՝ էլեկտրահա-	…					

Զբաղմունքները	Խնդիրների բնագավառները	Աշխատանքային գործառույթները	Գիտելիքը	Հմտությունները	Կարողունակությունները	ՈՈՇ-ի մակարդակը (1 կամ 2)
ղորդագծերի, մալուխագործզողող (7245)						
Օպերատորներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի (8161)	…					
Հսկիչ՝ էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչի (9153)	…					
…	…					

Պետք է հաշվի առնել, որ խնդիրների ցանկացած բնագավառում կարող են ներկայացված լինել ամենատարբեր մակարդակների որակավորում (արհեստավորից մինչև ճարտարագետ կամ հետազոտող) պահանջող (կամ անգամ չպահանջող, օրինակ՝ առանց մասնագիտական որակավորման բանվոր) գործառույթներ: Այդ իսկ պատճառով ամբողջական ՈՈՇ-ը հաջորդական, փոխկապակցված որակավորումների շարք է՝ արհեստավոր (կրտսեր մասնագետ) → մասնագետ → բակալավր → մագիստրոս → հետազոտող և այլն, որոնք կարելի է ձեռք բերել անմիջականորեն կամ լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով: Որակավորում չպահանջող աշխատանքները ՈՈՇ-ում չեն արտահայտվում, թեև դրանք կարող են տեղ գտնել ոլորտի զբաղմունքների կամ պաշտոնների ցանկում:

Մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակների համար սահմանվում են հետևյալ մակարդակները՝

- **1-ին մակարդակ՝ արհեստավորի (կրտսեր մասնագետի) որակավորում**՝ արհեստագործական կրթության արդյունք,
- **2-րդ մակարդակ՝ մասնագետի որակավորում**՝ միջին մասնագիտական կրթության արդյունք:

Համապատասխանաբար՝ կոնկրետ որակավորումները, որոնք տվյալ ոլորտի համար կսահմանվեն ձևաչափ 2-ում բերված բաշխման հիմա վրա, պետք է դասակարգված լինեն՝ ըստ վերոնշյալ երկու մակարդակների: Միկրոորակավորումներ սահմանվելու դեպքում դրանք անհրաժեշտ կլինի դասակարգել՝ ըստ որակավորումների համապատասխան մակարդակների:

Կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումների արդյունքում ներդրվել է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները գնահատելու, ճանաչելու և վկայագրելու համակարգ, ընձեռվել է հնարավորություն լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցում անցնելու միջոցով ձեռք բերել որոշակի կարողունակություններ, որոնք կարող են հանգեցնել միկրոորակավորումների շնորհման, իսկ առավել փոքր հատվածները՝ որոշակի կարողունակությունների ճանաչման, հավաստագրման: Հետևաբար, անձը կարող է մաս-մաս ձեռք բերել կարողունակություններ և դրանց կուտակման միջոցով հասնել միկրոորակավորման, երբեմն՝ նաև որակավորման:

2.6. ՈՈՇ-ի ձևաչափի լրացումը

Այս բաժնում ներկայացվում է վերևում բերված *Ձևաչափ 1-ի* լրացման կարգը:

ՈՈՇ-ի վերնագիրը. այս դաշտում նշվում է ոլորտի անվանումը՝ համաձայն ՏԳՏԴ հատվածի (հատվածների) կամ խմբի (խմբերի), ինչպես նաև դրա (դրանց) դասիչը, օրինակ՝

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՈՐՍՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (01) ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

կամ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ (35.1) ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Ոլորտի շրջանակը. ոլորտի շրջանակը սահմանելիս անհրաժեշտ է օգտվել ՏԳՏԴ պարզաբանումներից (ՏԳՏԴ մաս 2)։ Օրինակ՝ երկրորդ ոլորտի համար ոլորտի շրջանակը ՈՈՇ-ի ձևաչափում կլրացվի հետևյալ կերպ՝

Տարբեր աղբյուրներից և միջոցներով ստացված՝ ջերմային, միջուկային, գազատուրբինային, հիդրոէլեկտրական և այլ (բացառությամբ թափոնների այրման միջոցով ստացված) էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման համակարգերի և բաշխիչ ցանցերի (մալուխների, սյուների, հաշվիչների, էլեկտրալարերի համակարգ) կառավարում, որի արդյունքում էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպություններից այն հաղորդվում և բաշխվում է վերջնական սպառողների միջև (վաճառվում նրանց)։

ՈՈՇ-ի ենթոլորտները. թվարկվում են տվյալ ոլորտի ենթոլորտները՝ համաձայն ՏԳՏԴ խմբերի (եթե ոլորտն արտահայտված է հատված(ներ)ով) կամ դասերի (եթե ոլորտն արտահայտված է խմբ(եր)ով, օրինակ՝

10.1. Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն, 10.2. Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում, 10.3. Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, 10.4. Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն, 10.5. Կաթնամթերքի արտադրություն, և այլն։

կամ

35.11. Էլեկտրաէներգիայի արտադրություն, 35.12. Էլեկտրաէներգիայի հաղորդում, 35.13. Էլեկտրաէներգիայի բաշխում, 35.14. Էլեկտրաէներգիայի վաճառք։

Որակավորումները. ըստ մակարդակների՝ թվարկվում են սույն ուղեցույցի 2.5 բաժնում ներկայացված եղանակով որոշարկված

որակավորումները, ինչպես նաև դրանց դասիչները: Վերջիններս հնգանիշ են (եթե որպես ոլորտ ընտրված է ՏԳՏԴ հատված) կամ վեցանիշ (եթե որպես ոլորտ ընտրված է ՏԳՏԴ խումբ)՝ **xx-x-xx** կամ **xx.x-x-xx**.



Այսպես, «(01) Բուսաբուծության ու անասնաբուծության, որսորդության և հարակից ծառայությունների» ՈՈՇ-ի «Այգեպան» որակավորումը կկրի, օրինակ՝ 01-4-03, իսկ «Տեխնիկ՝ անտառային և անտառապուրակային տնտեսության» որակավորումը, օրինակ՝ 01-5-08 դասիչը, մինչդեռ «(35.1) Էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման» ՈՈՇ-ի «Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների տարրերի» որակավորումը կկրի, օրինակ՝ 35.1-4-01, իսկ «Տեխնիկ՝ էլեկտրական կայանների, ցանցերի և համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման» որակավորումը, օրինակ՝ 35.1-5-01 դասիչը:

Միկրոորակավորումները նույնպես կրում են դասիչներ՝ աստղանիշով առանձնացված լրացուցիչ նիշով: Այդ դասիչներն ունեն **xx-x-xx*z** կամ **xx.x-x-xx*z** տեսքը, որտեղ առաջին 5 կամ 6 նիշերը ներկայացնում են որակավորումը, որի բաղկացուցիչ մաս է կազմում միկրոորակավորումը, իսկ վերջին նիշը՝ տվյալ միկրոորակավորման հերթական համարը:

Հնարավոր զբաղմունքները. Տվյալ դաշտում թվարկվում են ԶՊԿԴ զբաղմունքները, որոնք կարող են իրականացնել տվյալ որակավորմամբ մասնագետները: «Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների տարրերի» որակավորման համար կարող են հնարավոր լինել, օրինակ՝

8282 ստորին խմբի՝

- Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների մասերի,
- Օպերատոր՝ տրանսֆորմատորային կոճերի փաթաթման մեքենայի,
- Օպերատոր՝ ստատորային կոճերի փաթաթման մեքենայի,
- Օպերատոր՝ ռոտորային կոճերի փաթաթման մեքենայի,

8283 ստորին խմբի՝

- Օպերատոր՝ շիկացման թելի փաթաթման մեքենայի,

9321 ստորին խմբի՝

- Ձեռքով փաթաթող՝ կոճերի,
- Ձեռքով փաթաթող՝ ռոտորային կոճերի,
- Ձեռքով փաթաթող՝ ստատորային կոճերի,
- Ձեռքով փաթաթող՝ տրանսֆորմատորի կոճերի,
- Ձեռքով փաթաթող՝ էլեկտրաշարժիչի խարիսխի փաթույթի

զբաղմունքները: Ընդ որում՝ որոշակի հարակից զբաղմունքներ կարող են հնարավոր լինել մեկից ավելի որակավորման համար:

ԳԿՀ-ները. ԳԿՀ-ները, որոնք սույն ուղեցույցի 2.5 բաժնում ներկայացված եղանակով որոշարկվել են յուրաքանչյուր աշխատանքային գործառույթի համար և ապա՝ խմբավորել՝ ըստ որակավորումների, ՈՈՇ-ի ձևաչափում նշվում են յուրաքանչյուր որակավորման համար: Ըստ որակավորումների մակարդակների՝ ԳԿՀ-ները պետք է լիովին համապատասխանեն ՈԱՇ-ի համապատասխան մակարդակների համար ԳԿՀ-ների նկատմամբ սահմանված ընդհանուր պահանջներին:

2.7. ՈՈՇ-ի փորձարկումը, գնահատումը և վերանայումը

ՈՈՇ-ների փորձարկումը, գնահատումը և վերանայումը կսահմանվի համապատասխան կարգով: Սակայն պետք է հաշվի առնել, որ ՈՈՇ-ները, նախ՝ կներդրվեն փորձարարական կարգով՝ դրանցում ընդգրկված յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը (տես հաջորդ գլխում) առնվազն մեկ շրջափուլով փորձարկելու, կրթության և աշխատաշուկայի պահանջների համապատասխանությունը և ոլորտային շրջանակի կիրառման

արդյունավետությունը պարբերաբար գնահատելու նախապայմանով: Անգամ ամբողջական ներդրումից հետո, ՈՈՇ-ները կգնահատվեն և կարդիականացվեն 3-5 տարի պարբերականությամբ՝ հաշվի առնելով թե՛ աշխատաշուկայից, թե՛ ՄԿՈՒ համակարգից ստացված արձագանքները:

ԳԼՈՒԽ 3. ՈՇՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ՈՇՆ կառուցվածքը

Ինչպես նշվեց վերևում՝ ՄԿՈՒ օրենքը պահանջում է շրջանակային նկարագրեր ՈՈՇ-ի յուրաքանչյուր որակավորման համար: Այդ նկարագրերը հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը[18]: Նույն օրենքը նաև մանրամասնում է որակավորման *շրջանակային նկարագրի բաղադրիչները*[19]: Դրանք են.

1) *որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները.*
2) *որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները, ներառյալ պետական ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը.*
3) *ուսանողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը՝ արտահայտված կրեդիտներով, և ուսումնառության նվազագույն տևողությունը.*
4) *ծրագրի բովանդակությունը՝ որակավորումն ապահովող դասընթացների կամ մոդուլների ցանկը և յուրաքանչյուր դասընթացին կամ մոդուլին հատկացվող կրեդիտը.*
5) *որակավորման առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան լաբորատորիաների և ուսումնարտադրական տարածքների (արհեստանոցների) գույքի և սարքավորումների նվազագույն պահանջները և չափաքանակը.*
6) *շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության հնարավոր ոլորտը:*

ՈՇՆ-ի կառուցվածքը ներկայացված է *Ձևաչափ 3-ում*:

Հիշեցնենք, որ ՈՇՆ մշակման գործում նույնպես պետք է հաշվի

---

[18] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք. հոդված 7, մաս 7 և հոդված 19, մաս 1, կետ 1:

[19] ՀՀ «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենք. հոդված 7, մաս 8:

առնել ՄԿՈՒ օրենքի այն պահանջը, որ որակավորման շրջանակային նկարագրի, ինչպես նաև ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների նկատմամբ պահանջները ձևավորում են համապատասխան ճյուղային նախարարություններն ու այլ համապատասխան գերատեսչությունները, սակայն՝ սերտորեն համագործակցելով մասնավոր հատվածի հետ:

Ձևաչափ 3

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ոլորտը	
Որակավորման անվանումը	
Որակավորման մակարդակը	
Մաս 1. Որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները	
1.1. Որակավորման ուղղվածությունը	
1.2. Զբաղմունքները և դրանց նկարագիրը	
1.3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները	
Մաս 2. Որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները,	
2.1. Մուտքային պահանջները	
2.2. Ելքային պահանջները	

Մաս 3. Սովորողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը և ուսումնառության նորմատիվային տևողությունը	
3.1. Ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը	
3.2. Ուսումնառության նորմատիվային տևողությունը	
Մաս 4. Ծրագրի բովանդակությունը	
4.1. Դասընթացները (առարկաները)	
4.2. Մոդուլները	
Մաս 5. Ուսումնանյութական ապահովումը	
5.1. Նվազագույն պահանջները ուսումնական լաբորատորիաների և ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոցների) գույքի և սարքավորումների նկատմամբ	
5.2. Այլ պահանջներ	

3.2. ՈՇՆ ձևաչափի լրացումը

Ստորև ներկայացվում է վերևում բերված Ձևաչափ 3-ի լրացման կարգը:

Նկարագրի առաջնորդող մաս

Ոլորտը. նշվում է այն ոլորտի անվանումը, որի ՈՈՇ-ին է վերաբերում տվյալ որակավորումը: Անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան ՈՈՇ-ին: Օրինակ՝

(35.1) Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում

Որակավորման անվանումը. այս դաշտում նշվում է

որակավորման դասիչն ու անվանումը՝ կրթության լիազոր մարմնի կողմից հաստատված իրավական ակտի համաձայն, օրինակ՝

35.1-4-01 Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների տարրերի:

Որակավորման մակարդակը. այս դաշտում նշվում է որակավորման մակարդակը՝ ըստ ՈՈՇ-ի և ՈԱՇ-ի, ինչպես նաև կրթության մակարդակը՝

ՈՈՇ - 1, ՈԱՇ - 4՝ արհեստագործական կրթություն:

կամ

ՈՈՇ - 2, ՈԱՇ - 5՝ միջին մասնագիտական կրթություն:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արհեստագործական կրթությունը համապատասխանում է ՈԱՇ-ի 4-րդ, իսկ միջին մասնագիտական կրթությունը՝ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին:

Մաս 1. Որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները

1.1. Որակավորման ուղղվածությունը. այս դաշտում նշվում է, թե համապատասխան իրավական ակտով հաստատված ՀՀ դասակարգչով սահմանված տնտեսական գործունեության որ տեսակի (կամ տեսակների) շրջանակներում կարող է աշխատել տվյալ որակավորումն ունեցողը, օրինակ՝

Այս որակավորմամբ մասնագետը կարող է աշխատել էլեկտրաշարժիչների, գեներատորների, տրանսֆորմատորների, էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ սարքերի արտադրությունում (ՀՀ ՏԳՏ 27.1 խումբ):

Ըստ անհրաժեշտության՝ կարող են բերվել լրացուցիչ մանրամասներ և/կամ նկարագրություններ:

1.2. Զբաղմունքները և դրանց նկարագիրը. այս դաշտում նշվում են այն զբաղմունքները (ըստ համապատասխան պետական կառավարման լիազորված մարմնի (մարմինների) իրավական

ակտով հաստատված ՀՀ զբաղմունքների, պաշտոնների և կարողունակությունների դասակարգչի՝ ԶՊԿԴ), որոնք համապատասխանում են տվյալ որակավորմանը, օրինակ՝

Այս որակավորմամբ մասնագետը կարող է իրականացնել ՀՀ զբաղմունքների դասակարգչով սահմանված 8282 սպորին խմբի՝

- *Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների մասերի,*
- *Օպերատոր՝ տրանսֆորմատորային կոճերի փաթաթման մեքենայի,*
- *Օպերատոր՝ սպատորային կոճերի փաթաթման մեքենայի,*
- *Օպերատոր՝ ռոտորային կոճերի փաթաթման մեքենայի,*

8283 սպորին խմբի՝

- *Օպերատոր՝ շիկացման թելի փաթաթման մեքենայի,*

9321 սպորին խմբի՝

- *Ձեռքով փաթաթող՝ կոճերի,*
- *Ձեռքով փաթաթող՝ ռոտորային կոճերի,*
- *Ձեռքով փաթաթող՝ սպատորային կոճերի,*
- *Ձեռքով փաթաթող՝ տրանսֆորմատորի կոճերի,*
- *Ձեռքով փաթաթող՝ էլեկտրաշարժիչի խարիսխի փաթույթի զբաղմունքները:*

Նրանց պարտականությունները ներառում են ...

Պարտականությունները ներկայացվում են ԶՊԿԴ-ով յուրաքանչյուր զբաղմունքի համար սահմանված պարտականությունների համաձայն:

1.3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները. այս դաշտում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն, այն է՝ ԳՀԿ-ները՝ ըստ էության արտացոլում են համապատասխան ՈՈՇ-ով տվյալ որակավորման համար սահմանված ԳՀԿ-ները և կարող են կրկնել դրանց ձևակերպումները կամ ներկայացվել այլ՝ ավելի նպատակահարմար խմբագրությամբ:

Մաս 2. Որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները

2.1. Մուտքային պահանջները. այս դաշտում նշվում է կրթության նվազագույն մակարդակը, որի հիմքով թույլատրվում է ստանալ տվյալ որակավորումը: Նշվում են նաև մուտքային այլ պահանջներ, եթե առկա են, օրինակ՝

Հիմնական ընդհանուր կրթություն և դրական գնահատականներ <թվարկվում են առարկաները> առարկաների ընդունելության քննություններից:

Հնարավոր է, որ որոշ որակավորումների համար բավարար լինի տարրական ընդհանուր կրթությունը և որոշակի միկրոորակավորումների (մասնագիտացումների) առկայությունը: Կարող են հիմք ընդունվել նախընթաց ուսումնառության արդյունքով ձեռք բերված կրեդիտները և/կամ ուսումնառության վերջնարդյունքները:

2.2. Ելքային պահանջները. այս դաշտում նշվում են տվյալ որակավորումը ստանալու համար սահմանված բոլոր պահանջները: Անհրաժեշտ է հստակ նշել պետական ամփոփիչ ստուգման իրականացման թույլատրելի ձևը կամ ձևերը: Օրինակ՝

Տվյալ որակավորումը ստանալու համար անհրաժեշտ է նվաճել 1.3 կետում նշված ուսումնառության բոլոր վերջնարդյունքները, ինչպես նաև հաջողությամբ անցնել պետական ամփոփիչ ստուգում՝ դիպլոմային նախագծի պաշտպանության ձևով և/կամ դրական գնահատականներով հանձնել պետական քննություն <թվարկվում են առարկաները> առարկաներից:

Մաս 3. Սովորողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը և ուսումնառության նորմատիվային տևողությունը

3.1. Ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը. այս դաշտում նշվում է սովորողի ուսումնական բեռնվածությունը՝ արտահայտված կրեդիտներով, օրինակ՝

Առնվազն <նշվում է կրեդիտների թիվը> կրեդիտ:

3.2. Ուսումնառության նորմատիվային տևողությունը. այս դաշտում նշվում է տվյալ որակավորման համար նախատեսված կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը՝ արտահայտված տարիներով և/կամ ամիսներով, օրինակ՝

2 տարի 10 ամիս:

Մաս 4. Ծրագրի բովանդակությունը

4.1. Դասընթացները (առարկաները). այս դաշտում նշվում են առարկաները, որոնց դասընթացները պարտադիր են տվյալ որակավորումը ստանալու համար, և դրանց ծավալը, օրինակ՝

• *Մաթեմատիկա՝ 36 ժամ (1 կրեդիտ),* • *Անգլերեն լեզու՝ 72 ժամ (2 կրեդիտ).* • *...:*

4.2. Մոդուլները. այս դաշտում նշվում են պարտադիր մոդուլները և դրանց ծավալը, օրինակ՝

• *Հաղորդակցություն՝ 36 ժամ (1 կրեդիտ),* • *Ձեռներեցություն՝ 72 ժամ (2 կրեդիտ).* • *...:*

Մաս 5. Ուսումնանյութական ապահովումը

5.1. Նվազագույն պահանջները ուսումնական լաբորատորիաների և ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոցների) գույքի և սարքավորումների նկատմամբ. այս դաշտում նշվում են ուսումնական արհեստանոցների, լաբորատորիաների, կաբինետների, մասնագիտացված դասասենյակների և դրանց գույքի և սարքավորումների ցանկը և թվաքանակը՝ մեկ ուսումնական խմբի հաշվարկով, և պահանջները դրանց նկատմամբ:

5.2. Այլ պահանջներ. այս դաշտում նշվում են որակավորման առանձնահատկություններով պայմանավորված այլ պահանջներ:

Ստորև ներկայացված է ՈՇՆ ձևաչափի լրացման ամփոփ օրինակելի տեսքը:

Ոլորտը	Նշվում է այն ոլորտի անվանումը, որի ՈՈՇ-ին է վերաբերում տվյալ որակավորումը: Անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան ՈՈՇ-ին: Օրինակ՝ *(35.1) էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում*
Որակավորման անվանումը	Նշվում է որակավորման դասիչն ու անվանումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «___» _____ 202_թ. «Մասնագիտական կրթության որակավորումների ոլորտային շրջանակներ, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը կազմելու և հաստատելու մասին» №___ հրամանով հաստատված ուղեցույցի պահանջի համաձայն, օրինակ՝ *35.1-4-01 Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների տարրերի*
Որակավորման մակարդակը	Նշվում է որակավորման մակարդակը՝ ըստ ՈՈՇ-ի և Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետև՝ ՈԱՇ), ինչպես նաև կրթության մակարդակը՝ *ՈՈՇ - 1, ՈԱՇ - 4՝ արհեստագործական կրթություն* կամ *ՈՈՇ - 2, ՈԱՇ - 5՝ միջին մասնագիտական կրթություն* Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արհեստագործական կրթությունը համապատասխանում է ՈԱՇ-ի 4-րդ, իսկ միջին մասնագիտական կրթությունը՝ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին:
Մաս 1. Որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները	
1.1. Որակավորման ուղղվածությունը	Նշվում է, թե համապատասխան իրավական ակտով հաստատված ՀՀ դասակարգչով սահմանված տնտեսական գործունեության որ տեսակի (կամ տեսակների) շրջանակներում կարող է աշխատել տվյալ որակավորումն ունեցողը, օրինակ՝ *Այս որակավորմամբ մասնագետը կարող է աշխատել էլեկտրաշարժիչների, գեներատորների, տրանսֆորմատորների, էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ սարքերի արտադրությունում (ՀՀ ՏԳՏ 27.1 խումբ):* Ըստ անհրաժեշտության՝ կարող են բերվել լրացուցիչ մանրամասներ և/կամ նկարագրություններ:
1.2. Զբաղմունքները և դրանց նկարագիրը	Նշվում են այն զբաղմունքները (ըստ համապատասխան իրավական ակտով հաստատված ՀՀ զբաղմունքների, պաշտոնների և կարողունակությունների դասակարգչի՝ ԶՊԿԴ), որոնք համապատասխանում են տվյալ որակավորմանը

1.3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները	Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն, այն է՝ ԳՀԿ-ներն ըստ էության արտացոլում են համապատասխան ՈՈՇ-ով տվյալ որակավորման համար սահմանված ԳՀԿ-ները և կարող են կրկնել դրանց ձևակերպումները կամ ներկայացվել այլ՝ ավելի նպատակահարմար խմբագրությամբ:
Մաս 2. Որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները,	
2.1. Մուտքային պահանջները	նշվում է կրթության նվազագույն մակարդակը, որի հիմքով թույլատրվում է ստանալ տվյալ որակավորումը: Նշվում են նաև մուտքային այլ պահանջներ, եթե առկա են, օրինակ՝ *Հիմնական ընդհանուր կրթություն և դրական գնահատականներ <թվարկվում են առարկաները> առարկաների ընդունելության քննություններից:* Հնարավոր է, որ որոշ որակավորումների համար բավարար լինի տարրական ընդհանուր կրթությունը և որոշակի միկրոորակավորումների (մասնագիտացումների) առկայությունը:
2.2. Ելքային պահանջները	Նշվում են տվյալ որակավորումը ստանալու համար սահմանված բոլոր պահանջները: Անհրաժեշտ է հստակ նշել պետական ամփոփիչ ստուգման իրականացման թույլատրելի ձևը կամ ձևերը: Օրինակ՝ *Տվյալ որակավորումը ստանալու համար անհրաժեշտ է նվաճել 1.3 կետում նշված ուսումնառության բոլոր վերջնարդյունքները, ինչպես նաև հաջողությամբ անցնել պետական ամփոփիչ ստուգում՝ դիպլոմային նախագծի պաշտպանության ձևով և/կամ դրական գնահատականներով հանձնել պետական քննություն <թվարկվում են առարկաները> առարկաներից:*
Մաս 3. Սովորողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը և ուսումնառության նորմատիվային տևողությունը	
3.1. Ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը	Նշվում է սովորողի ուսումնական բեռնվածությունը՝ արտահայտված կրեդիտներով, օրինակ՝ *Առնվազն <նշվում է կրեդիտների թիվը> կրեդիտ:*
3.2. Ուսումնառության նորմատիվային տևողությունը	Նշվում է տվյալ որակավորման համար նախատեսված կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը՝ արտահայտված տարիներով և/կամ ամիսներով, օրինակ՝ *2 տարի 10 ամիս:*
Մաս 4. Ծրագրի բովանդակությունը	
4.1. Դասընթացները (առարկաները)	Նշվում են առարկաները, որոնց դասընթացները պարտադիր են տվյալ որակավորումը ստանալու համար, և դրանց ծավալը, օրինակ՝ *1. Մաթեմատիկա՝ 36 ժամ (1 կրեդիտ),*

	2. Անգլերեն լեզու՝ 72 ժամ (2 կրեդիտ). *3. ...:*
4.2. Մոդուլները	Նշվում են պարտադիր մոդուլները և դրանց ծավալը, օրինակ՝ *1. Հաղորդակցություն՝ 36 ժամ (1 կրեդիտ),* *2. Ձեռներեցություն՝ 72 ժամ (2 կրեդիտ).* *3. ...:*
Մաս 5. Ուսումնանյութական ապահովումը	
5.1. Պահանջները ուսումնական արհեստանոցների, լաբորատորիաների և այլ մասնագիտացված տարածքների նկատմամբ	Նշվում են ուսումնական արհեստանոցների, լաբորատորիաների, կաբինետների, մասնագիտացված դասասենյակների և դրանց գույքի և սարքավորումների ցանկը և թվաքանակը՝ մեկ ուսումնական խմբի հաշվարկով, և պահանջները դրանց նկատմամբ:
5.2. Այլ պահանջներ	Նշվում են որակավորման առանձնահատկություններով պայմանավորված այլ պահանջներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ

«ՀՀ զբաղմունքների դասակարգիչ ՀԴ-009-2013» (այսուհետ՝ Դասակարգիչ) հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի № 873-Ն հրամանով: Դասակարգչի մշակման համար հիմք են հանդիսացել Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ ISCO-88 և ISCO-08 զբաղմունքների միջազգային դասակարգիչները, ինչպես նաև ՀՀ աշխատաշուկայում կատարված տարբեր հետազոտություններ: Դասակարգիչը բաղկացած է 4 մասից.

«Մաս 1. Նախաբան». տրվում են դասակարգչի կառուցվածքը, կոդավորման սկզբունքները, կիրառման ոլորտների, ինչպես նաև հիմնական խմբերի համառոտ նկարագրերը:

Մաս 2. Զբաղմունքների հիմնական խմբեր, ենթախմբեր փոքր և ստորին խմբեր». տրվում են հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի անվանումները:

«Մաս 3. Պարզաբանումներ զբաղմունքների հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի մասին». տրվում են վերը նշված խմբերում ներառված զբաղմունքների վերաբերյալ պարզաբանումներ, մասնավորապես՝ տվյալ զբաղմունքով զբաղված աշխատողների պարտականությունների, կրթության նվազագույն պահանջների ընդհանրական նկարագրերը:

«Մաս 4. Զբաղմունքների կառուցվածքային անվանումները՝ ըստ խմբերի». տրվում են աշխատաշուկայում կիրառություն ունեցող զբաղմունքների անվանումները՝ ըստ յուրաքանչյուր զբաղմունքի:

Դասակարգչում զբաղմունքները կոդավորվում են հիերարխիկ՝ ֆասեթային սկզբունքով, որը կատարվում է հետևյալ սկզբունքով.

1) «X» միանիշ կոդ, որը կիրառվում է հիմնական խմբերի կոդավորման համար: Կիրառվում են «0»-ից մինչև 9-ը թվերը:

2) «XX» երկնիշ կոդ, որը կիրառվում է ենթախմբերի համար, ընդ որում, առաջին նիշը ցույց է տալիս հիմնական խմբի կոդը, իսկ

երկրորդ նիշը՝ ենթախմբի կոդը: Ենթախմբի կոդի համար կիրառվում են «0»-ից մինչև 9-ը թվերը:

3) «XXX» եռանիշ կոդ, որը կիրառվում է փոքր խմբերի համար, ընդ որում, առաջին երկու նիշերը ցույց են տալիս ենթախմբի կոդը, իսկ երրորդ նիշը՝ փոքր խմբի կոդը: Փոքր խմբի կոդի համար կիրառվում են «0»-ից մինչև 9-ը թվերը:

4) «XXXX» քառանիշ կոդ, որը կիրառվում է ստորին խմբերի համար, ընդ որում առաջին երեք նիշերը ցույց են տալիս փոքր խմբի կոդը, իսկ չորրորդ նիշը՝ ստորին խմբի կոդը: Ստորին խմբի կոդի համար կիրառվում են «0»-ից մինչև 9-ը թվերը:

Դասակարգչի մաս 2-ում ներկայացված զբաղմունքները դասակարգվում են հետևյալ 10 հիմնական խմբերում.

1) Հիմնական խումբ 0. «Զինված ուժեր»,
2) Հիմնական խումբ 1. «Ղեկավարներ»,
3) Հիմնական խումբ 2. «Մասնագետներ՝ բարձր որակավորում ունեցող»,
4) Հիմնական խումբ 3. «Տեխնիկ-մասնագետներ և այլ միջին տեխնիկական անձնակազմ»,
5) Հիմնական խումբ 4. «Գրասենյակային աշխատողներ»,
6) Հիմնական խումբ 5. «Առևտրի և սպասարկման ոլորտի աշխատողներ»,
7) Հիմնական խումբ 6. «Աշխատողներ՝ գյուղատնտեսության, անտառտնտեսության, ձկնարդյունաբերության և ձկնորսության ոլորտների»,
8) Հիմնական խումբ 7. «Արհեստավորներ և հարակից զբաղմունքների բանվորներ»,
9) Հիմնական խումբ 8. «Արդյունաբերական մեքենաների և կայանքների օպերատորներ և հավաքողներ»,
10) Հիմնական խումբ 9. «Որակավորում չպահանջող տարրական զբաղմունքներ»:

* * *

Պետք է նկատել, որ Դասակարգիչն ընդունվել է 2013 թվականին և անցած 12 տարիների ընթացքում ՀՀ աշխատաշուկայում, ինչպես նաև միջազգային աշխատաշուկայում, տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ: Վերջիններս հաշվի առնելու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2025 թվականի փետրվարին ձեռնարկեց աշխատանքներ Դասակարգիչը վերանայելու նպատակով:

Ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «ՀՀ զբաղմունքների, պաշտոնների և կարողունակությունների (կոմպետենցիաների) ազգային դասակարգչի ՀԴ-009-2025» նախագիծը (այսուհետև՝ Դասակարգչի նախագիծ):

Դասակարգչի նախագծի մշակման համար հիմք են ընդունվել.

1) ISCO-08՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտը,

2) ESCO v1.2.0՝ Եվրոպական հմտությունների, կոմպետենցիաների և զբաղմունքների դասակարգիչը:

Դասակարգչի նախագիծը բաղկացած է 6 մասից.

«Մաս 1. Նախաբան». տրվում են դասակարգչի կառուցվածքը, կոդավորման սկզբունքները, կիրառման ոլորտը, ինչպես նաև այլ տեղեկատվություն: Միաժամանակ, այս մասում ներկայացված է «Մաս 2-ում» բերված զբաղմունքների հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի ցանկը:

«Մաս 2. Զբաղմունքների հիմնական խմբեր, ենթախմբեր, փոքր և ստորին խմբեր». տրվում են հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի անվանումները, որոնց մեջ խմբավորվում են աշխատաշուկայում առկա զբաղմունքներն իրենց համապատասխան նկարագրություններով, այլընտրանքային անվանումով և տվյալ զբաղմունքով զբաղված աշխատողների պարտականությունների ընդհանրական նկարագրով:

«Մաս 3. Պաշտոնների դասակարգում՝ ըստ ստորին խմբերի». տրվում են ՀՀ աշխատաշուկայում առավել լայն տարածում ունեցող

պաշտոնների անվանումները և կոդերը:

«Մաս 4. Կարողունակությունների (կոմպետենցիաների) հիմնական խմբեր, ենթախմբեր, փոքր խմբեր և ստորին խմբեր՝ գիտելիք բաղադրիչ». տրվում են գիտելիքի վերաբերյալ հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի անվանումներն ու կոդերը՝ դասակարգված ըստ կրթության մակարդակների և ուղղությունների:

«Մաս 5. Կարողունակությունների (կոմպետենցիաների) հիմնական խմբեր, ենթախմբեր, փոքր խմբեր և ստորին խմբեր՝ լեզվական կարողություններ». տրվում են լեզվական կարողությունների վերաբերյալ հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի անվանումներն ու կոդերը՝ դասակարգված լեզվի տեսակների:

«Մաս 6. Կարողունակությունների (կոմպետենցիաների) հիմնական խմբեր, ենթախմբեր, փոքր խմբեր և ստորին խմբեր՝ հիմնական և լրացուցիչ հմտություններ», որտեղ տրվում են հիմնական և լրացուցիչ հմտությունների վերաբերյալ հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի անվանումներն ու կոդերն՝ ըստ զբաղմունքների ենթախմբերի և ստորին խմբերի:

Դասակարգչի նախագծում զբաղմունքների կոդավորվումը կատարվել է նույն հիերարխիկ՝ ֆասեթային սկզբունքով, որը նկարագրված է վերևում:

Դասակարգչի նախագծի մաս 2-ում ներկայացված զբաղմունքները դասակարգվում են նույն 10 հիմնական խմբերում, սակայն էական փոփոխություններ են կատարվել ենթախմբերում, փոքր և ստորին խմբերում, որոնք ավելի լավ են համապատասխանեցվել աշխատաշուկայի ներկայիս պահանջներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-297:
2. «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-250-Ն:
3. ՀՀ կառավարության 31.03.2011թ. «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 332-Ն որոշում:
4. ՀՀ կառավարության 07.07.2016թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 10.12.2019թ. «2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանում փոփոխություն կատարելու և հայաստանի հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի N 562-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 1579-Ն հրաման:
6. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Զբաղմունքների դասակարգիչ» հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հուլիսի 31-ի N 632-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 873-Ն հրաման:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ